— Ֆարհատ, — ասաց ինձ մի անգամ որսորդը, — դու շատ ես չարչարում թռչուններին, եթէ այսպէս կը վարուես, ես միւս անգամ քեզ ոչինչ չեմ տայ –

Ես, սկսեալ փոքր հասակիցս, խօսքի ետեւից ման եկողներից չէի. իսկոյն պատասխանեցի.

— Ես խօ չեմ սպանում, բայց դու սպանում ես թռչուններին ու ինձ ասում, թէ ինչո՞ւ ես չարչարում:

— Սպանելու եւ տանջելու մէջ մեծ զանազանութիւն կայ, — ասաց նա ժպտելով, — վերջինը աւելի վատ է:

Ամէն անգամ, երբ մեր թաղի մէջ ձայն էր տարածւում, թէ Աւօյի ծուղակի մէջ գայլ, արջ կամ մի ուրիշ գազան է ընկել, ամբողջ թաղը թափւում էր այնտեղ տեսնելու: Նա իր ծուղակը կազմել էր քաղաքից դուրս, որ շատ հեռու չէր մեր բնակարանից: Դա մի բոլորակ վիրապ էր, բաւական ճարտարութեամբ գետնի մէջ փորած, եւ քսան արշինի չափ խորութիւն, հինգ արշինի չափ լայնութիւն ունէր: Երեւակայեցէք ձեզ մի սամովար. որի ջուր լցնելու տեղը դատարկ է, իսկ կրակ լցնելու տեղը ամբողջ է. — վիրապը մի այսպիսի ձեւ ունէր: Վիրապի մէջտեղում, ուր մի հաստ սիւնի նման պինդ գետին էր բարձրանում, նրա վրայ ամէն գիշեր դրւում էր մի գէշ, իսկ սիւնի չորս կողմի դատարկութիւնը ծածկւում էր եղէգներով, այնքան թոյլ կերպով, որ եթէ մի հաւ անցնելու լինէր ծածկոցի վրայ, իր ծանրութեամբ կարող էր իսկոյն ցած գլորուել: Գազաններր գէշի հոտը առնելով, մօտենում էին նրան, բայց դեռ գէշին չհասած, ընկնում էին վիրապի մէջ:

Վաղ — առաւօտեան յայտնւում էր որսորդը Մըհէի հետ: Բազմութիւնը հետաքրքրութեամբ սպասում էր, թէ ինչպէս պէտք է դուրս բերեն գազանին, որը կատաղած, զայրացած եւ անհանգիստ կերպով պտտւում էր վիրապի մէջ, մռնչում էր, զարհուրելի ձայներ էր արձակում եւ փորձեր էր փորձում դուրս գալ, բայց չէր կարողանում: Այդ միջոցին վիթխարի Մըհեն, աջ ձեռքում մի ահագին երկաթէ մահակ բռնած, իսկ ձախ ձեռքում բռնելով շղթաներով ամրացրած քալափչեն, իջնում էր վիրապի մէջ: Բազմութիւնը սարսափում էր կիսախելագար որսորդի աներկիւղութեան վրայ: Լինէր այնտեղ գայլ, արջ, վագր, ինձ, մի երկչոտ աղոէս, — միեւնոյն էր Մըհէի համար. նա բոլոր գազանների վրայ նայում էր, որպէս ոչխարների վրայ:

Վիրապի մէջ սկսւում էր գազանի եւ Մըհէի ստորերկրեայ կռիւը: Մենք ոչինչ չէինք տեսնում, միայն լսում էինք գազանի բարկացկոտ մռնչիւնը, շղթայի ձայնը եւ երբեմն երկաթէ մահակի ծանր հարուածները: Երբ գազանը